Աբգար որդի Արշամայ՝ ամս ԼԸ։ Իսորա երկրորդ ամին հարկեցան Հայք ընդ իշխանութեամբ Հռոմայեցւոց. զի եկ հրաման յՕդոստոս Կայսերէն՝ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս՝ ասէ սուրբ Աւետարանն, յորում ամին ծնաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս։ Սա Աբգար՝ գիր գրեաց առ Քրիստոս, և ընկալաւ զպատկերն տէրունական՝ 'ի վերայ դաստառակի, և բժշկեցաւ յախտէն։ Սա շինեաց զՈւրհա և արար թախտ*)։ Թադէոս Առաքեալն Քրիստոսի եկն 'ի Հայաստան, և հաւատացեալ Աբգար 'ի Տէր՝ մկրտեցաւ տամբք իւրովք, կոտորեաց զկուռս և զկռատունս. գրեաց Աբգար Հռոմայ Կայսերն և Պարսից Թագաւորին՝ զհաւատալն իւր 'ի Քրիստոս՝ յորդորելով զնոսա 'ի սուրբ հաւատս, և զՀրէայսն չարախօսեաց նոցա. և մինչ կամէր կոտորել զՀրէայսն՝ վախճանեցաւ։

(*) Ամոռանիստ, թագաւորանիստ։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան